ԵՐԿՐԱՄԵԽԱՆԻԿԱ, գիտություն երկրակեղևի մեխանիկական վիճակների և երկրակեղևում բնական տարբեր ֆիզիկական ազդեցությունների հետևանքով զարգացող պրոցեսների մասին: Ուսումնասիրելով ապարների մեխանիկական հատկանիշների ձևավորման, երկրակեղևում լարումների վերաբաշխման և ապարազանգվածների դեֆորմացիաների, տեղափոխության, քայքայման ու ամրացման օրինաչափությունները՝ Ե. բացատրում է երկրակեղևի որևէ տեղամասում կատարվող լարված-դեֆորմացիոն վիճակի փոփոխությունը և կանխատեսում գալիք պրոցեսները: ՀՍՍՀ ԳԱ երկրաբանական գիտությունների ինստ-ի երկրամեխանիկայի բաժինը հետազոտություններ է կատարում Կովկասի տարածքում: